եթէ ուղիղ ճանապարհաւ, և կամ այլ քաղաք և գեօղ մտանելով մինչև ասացեալ կարաւանն ընդ բեռամբ իմով ամբողջ հասանելն կարին քաղաք և իջուցանել բեռինս 'ի սովորական տեղի իջեւանի, վասն այս ճանապարհորդութեանս շահ վարի հարիւրին տասն և երկու եթէ ընթացս այս կատարի զամիսս չորս աւելի քան զայն կրկնակի շահն ըստ անցելոյն ժամանակին, և 'ի վեր յիշեցեալ երիս հարիւր դահեկանի հասարակապէս վնասն եթէ ճանապարհի, գետոբեաց, անձրևից, թշնամեաց, հրոց, աւազակաց և այլն վերաբերէ առ կողմն ասացեալ պարոն Սամուէլ որդոյ Աթանէսի։

Այժմ դաշնադրութիւնս այս պարտականութեանս այսպէս է, որ եթէ վերոյ անուանեալ Մանասէս որդոյ Սիմիոնի կամ իմ կտակակատարն ժառանգն և անուանեալն լաւ և հաստատապէս հատուցումն առնեմ առ ասացեալ պարոն Սամուէլ որդոյ Աթանէսի կամ իւր կտակակատարին ժառանգին և անուանելոյն բոլոր ստոյգապէս բովանդակն երեք հարիւր դահեկան երծաթն որ է յիմն այս պարտականութեանս հանդերձ շահիւն որ վերա կբերէ 'ի յայսմ, յետ քսան և մի աւուրս անվնաս հասանելոյ վերոյ ասացեալ կարաւանն իմով բեռամբ առ ասացեալ կարաւանահանգիստն կարինու, որ է արզրում և եթէ կորնչիցի ասացեալ կարաւանում բեռինս